Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-102-29.11.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի *Հայաստանի Հանրապետության* հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 289-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում «հաշվարկելու եւ վճարելու» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ *«Պետական տուրքի մասին» օրենքին* համապատասխան տարեկան պետական տուրք վճարելու» բառերը:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2) պետական տուրքի հաշվարկման եւ գանձման ճշտության ստուգում.»:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում «Օրենսգրքով սահմանված ելակետային տվյալների եւ գործակիցների» բառերը փոխարինել «պետական տուրքի հաշվարկման եւ գանձման» բառերով:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

երկրորդ ընթերցում

Կ-102-29.11.2021-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 289-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում «հաշվարկելու եւ վճարելու» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ «Պետական տուրքի մասին» << օրենքին համապատասխան տարեկան պետական տուրք վճարելու» բառերը:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 335-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2) պետական տուրքի հաշվարկման եւ գանձման ճշտության ստուգում.»:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում «Օրենսգրքով սահմանված ելակետային տվյալների եւ գործակիցների» բառերը փոխարինել «պետական տուրքի հաշվարկման եւ գանձման» բառերով:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**
**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-102-29.11.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ կառավարություն | «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի **հոդված 1** | Նախագծի 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկվում է պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: | Ընդունվել է<br><br>Նախագծի 1-ին հոդվածում հիշատակվող օրենսգրքի լրիվ անվանումը համա-պատասխանեցվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին: | Ընդունվել է |
| 2. | ՀՀ կառավարություն | **Հոդված 1** | Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 289-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում կատարվող լրացման մեջ «Պետական տուրքի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) կրճատ անվանումը հիշատակելիս առաջարկվում է հանել «ՀՀ» հապավումը: | Ընդունվել է<br><br>Նախագծի 1-ին հոդվածում «ՀՀ » հապավումը հանվել է: | Ընդունվել է |
| 3. | ՀՀ կառավարություն | «Պետական տուրքի մասին» հայաստանի հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր | Նախագծի վերնագրից առաջարկվում է հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: | Ընդունվել է<br>Նախագծի վերնագրից հանվել են երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը: | Ընդունվել է |
| 4. | ՀՀ կառավարություն | **Հոդված 1** | Նախագծի 1-ին հոդվածում Օրենքի լրիվ անվանման հիշատակումն առաջարկ-վում է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին՝ հանելով «Հայաստանի Հանրապետության» բառերը, ինչպես նաև Օրենքի հերթական համարի նորմատիվ բնույթի վերաբերյալ նշումը: | Ընդունվել է<br><br>Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «Հայաստանի Հանրապետության» բա-ռերը և օրենքի հերթա-կան համարի նորմատիվ բնույթի վերաբերյալ նշումը: | Ընդունվել է |